ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И
СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

REPUBLIC OF ARMENIA THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

ՀՀ, 0009 Երևան, Տերյան 105
Հեռ. (37410) 54 74 25, Ֆաքս (37410) 58 72 84
E-mail: info@nuaca.am

Армения, 0009 Ереван, ул. Теряна, 105
Тел. (37410) 54 74 25, Факс (37410) 58 72 84
E-mail: info@nuaca.am

105, Teryan str., 0009 Yerevan, RA
Tel. (37410) 54 74 25, Fax (37410) 58 72 84
E-mail: info@nuaca.am

№ Ե/127-24

«08» 02 2024թ.

**«ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ» ՍՊԸ-ի**

**տնօրեն՝ Հ. Հովհաննիսյանին**

*Հարգելի պարոն Հովհաննիսյան*

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի և «ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ» ՍՊԸ-ի միջև 29.09.2023թ. կնքված ՃՇՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/23-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսված ապրանքը չի մատակարարվել սահմանված ժամկետում, որի արդյունքում պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերի համաձայն համալսարանը միակողմանի լուծում է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը՝ «ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ» ՍՊԸ-ն, ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա) խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ) որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ կառավարության որոշման 04.05.2017թ. N526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ մասի և 1-ին մասի «գ» ենթակետի 1-ին պարբերության համաձայն, պայմանագրի և որակավորման ապահովման գումարների չափը համապատասխանաբար կազմում է, սույն գնման

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի՝ 472 000.0 /չորս հարյուր յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամի 10 և 15 տոկոսների չափին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՃՇՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/23 ծածկագրով հրավերի 8.15 կետով՝ հինգ բանկային օրվա ընթացքում, Ձեր կողմից պայմանագրի կատարման ապահովման՝ 47 200.0 /քառասունյոթ հազար երկու հարյուր/ և որակավորման ապահովման՝ 70 800.0 /յոթանասուն հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ գումարները «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի N 15100-01964940200 հաշվին վճարելու դեպքում «ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Ռեկտորի պ/կ 2/8/2024 Ռ. Սուքիասյան

X

ՌՈԲԵՐՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Signed by: SUKIASYAN ROBERT 2907700111

Կատարող՝
ՖՏ դեպարտամենտի ղեկավարի
տեղակալ Վ. Աթանեսյան
/հեռ. 010-30-33-00 /838/, 099-55-67-41/